ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 808-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2023.05.15-2023.05.28 Պաշտոնական հրապարակման օրը 26.05.2023	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	25.05.2023
Ստորագրող մարմինը	ՀՀ փոխվարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	25.05.2023
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27.05.2023	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԶԳԱՅՈՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 808-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԶԳԱՅՈՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-42-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը և 6-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը փոփ. 14.12.23 N 2172-Ն)

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն այն ապրանքների ցանկը, որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ օրենքի իմաստով հսկվող ապրանքներ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի ապրանքների արտահանումը Հայաստանի Հանրապետությունից կամ դրանց տարանցիկ փոխադրումը, անկախ այն հանգամանքից տվյալ պահին հանդիսանում են հսկվող ապրանքներ թե ոչ, պետք է իրականացվեն օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով տրամադրված թույլտվության հիման վրա:

3. Սույն որոշումը չի տարածվում՝

1) ֆիզիկական անձանց կողմից սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության առ 2020 թվականի փետրվարի 13-ի N 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները չգերազանցող անձնական օգտագործման ապրանքների՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանման կամ դրանց տարանցիկ փոխադրման վրա.

2) ցուցահանդեսային և (կամ) մշակութային (այդ թվում՝ համերգային) և (կամ) սպորտային միջոցառումների, միջազգային ֆորումների, պետական հանդիպումների կազմակերպման համար Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ տարանցիկ եղանակով փոխադրված սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի այն ապրանքների վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունից վերադարձման նպատակով արտահանվում կամ տարանցիկ փոխադրվում են այն երկիր, որտեղից Հայաստանի Հանրապետություն ներմուծվել կամ տարանցիկ փոխադրվել էին.

3) Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ տարանցիկ եղանակով փոխադրված սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի այն ապրանքների վրա, որոնք ներմուծման կամ տարանցիկ փոխադրման գործարքի պայմանները (այդ թվում՝ քանակի, որակի և (կամ) այլ համանման պայմանները) չկատարելու պատճառով կամ գործարքի շրջանակներում փոխարինման, վերանորոգման համար Հայաստանի Հանրապետությունից վերադարձման նպատակով արտահանվում կամ տարանցիկ փոխադրվում են այն երկիր, որտեղից Հայաստանի Հանրապետություն ներմուծվել կամ տեղափոխվել էին։

(3-րդ կետը խմբ. 14.12.23 N 2172-Ն)

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

Երևան

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 25-ի N 808-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՈՐՈՇԱԿԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՕ-42-Ն ՕՐԵՆՔԻ ԻՄԱՍՏՈՎ ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ԱՏԳ ԱԱ խումբ	Նկարագրություն
8457 10	Մշակող կենտրոններ՝ մետաղի մշակման համար
8458 11	Թվային ծրագրային կառավարմամբ հորիզոնական խառատային մետաղակտրիչ հաստոցներ
8458 91	Թվային ծրագրային կառավարմամբ խառատային հաստոցներ՝ այլ
8459 61	Թվային ծրագրային կառավարմամբ ֆրեզերային հաստոցներ՝ այլ
8466 93	Մասեր և պարագաներ 8456–8461 ապրանքային դիրքերի հաստոցների համար
8471 50	Տվյալների մշակման բլոկներ՝ 8471 41 կամ 8471 49 ենթադիրքերում նկարագրվածներից տարբեր, մեկ իրանում հետևյալ սարքվածքներից մեկը կամ երկուսը պարունակող կամ չպարունակող՝ հիշող սարքվածքներ, ներանցման սարքվածքներ, արտանցման սարքվածքներ
8471 80	Հաշվողական մեքենաների այլ սարքվածքներ (տվյալների մշակման սարքվածքների, ներանցման և արտանցման սարքվածքների և հիշող սարքվածքների)
8482 10	Գնդիկավոր առանցքակալներ
8482 20	Կոնաձև հոլովակավոր առանցքակալներ՝ ներառյալ ներքին կոնաձև օղակները՝ հոլովակներով և զատիչներով հավաքված

8482 30	Հոլովակավոր գնդաձև առանցքակալներ
8482 50	Այլ առանցքակալներ՝ գլանաձև հոլովակներով՝ ներառյալ հավաքված զատիչները և հոլովակները
8486 10	Մեքենաներ և ապարատուրա բուլյաների և թիթեղների արտադրության համար
8486 20	Մեքենաներ և ապարատուրա կիսահաղորդչային սարքերի կամ էլեկտրոնային ինտեգրալային սխեմաների արտադրության համար
8486 40	Մեքենաներ և ապարատուրա՝ նշված տվյալ խմբի 11 (գ) ծանոթագրության մեջ
8504	Տրանսֆորմատորներ էլեկտրական, ստատիկ էլեկտրական կերպափոխիչներ (օրինակ՝ ուղղիչներ), ինդուկտիվության կոճեր և դրոսելներ՝ կերպափոխիչներ ստատիկ
8504 40	Կերպափոխիչներ ստատիկ
8517 61	Բազային կայաններ
8517 62	Մեքենաներ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների ընդունման, փոխակերպման և հաղորդման կամ վերականգնման համար՝ ներառյալ կոմուտացիոն սարքվածքները և երթուղիչները (մարշրուտիզատորները)
8517 69	Այլ ապարատուրա ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար՝ ներառյալ հաղորդալարային կապում կամ առանց հաղորդալարի ցանցի հաղորդակցման համար ապարատուրաները
8525 89	Այլ հեռուստատեսային խցիկներ, թվային խցիկներ և գրառող տեսախցիկներ
8526	Ռադիոտեղորոշման, ռադիոնավիգացիոն ապարատուրա և հեռակառավարման ռադիոապարատուրա՝ ռադիոնավիգացիոն ապարատուրա
8526 91	Ռադիոնավիգացիոն ապարատուրա
8529 10	Ալեհավաքներ և ամեն տեսակի ալեհավաքային անդրադարձիչներ, այդ արտադրատեսակների հետ օգտագործվող մասեր
ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8529	Մասեր՝ բացառապես կամ հիմնականում 8524-8528 ապրանքային դիրքերում ընդգրկված ապարատուրաների համար նախատեսված
8532 21	Այլ հաստատուն ծավալով կոնդենսատորներ՝ տանտալային
8532 24	Այլ հաստատուն ծավալով կոնդենսատորներ՝ բազմաշերտ կերամիկական
8534 00	Տպասխեմաներ
8536 69	Էլեկտրական ապարատուրա կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին միացնելու համար կամ էլեկտրական շղթաներում (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, ռելե, հալուն ապահովիչներ, լարման թռիչքների մարիչներ, խրոցակների եղանիկներ և վարդակներ, էլեկտրական լամպերի կոթառներ և այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ոչ ավելի լարման համար. օպտիկական մանրաթելերի համար միակցիչներ, թելքաօպտիկական լարանների կամ մալուխների համար՝ այլ
8536 90	Էլեկտրական ապարատուրա կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին միացնելու համար կամ էլեկտրական շղթաներում (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, ռելե, հալուն ապահովիչներ, լարման թռիչքների մարիչներ, խրոցակների եղանիկներ և վարդակներ, էլեկտրական լամպերի կոթառներ և այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ոչ ավելի լարման համար. օպտիկական մանրաթելերի համար միակցիչներ, թելքաօպտիկական լարանների կամ մալուխների համար՝ այլ սարքվածքներ
8537 10	Պուլտեր, պանելներ, բարձակներ, սեղաններ, բաշխիչ վահաններ և այլ հիմքեր էլեկտրական ապարատուրայի համար՝ սարքավորված 8535 կամ 8536 ապրանքային դիրքերում ընդգրկված երկու կամ ավելի սարքվածքներով, էլեկտրական հոսանքի ղեկավարման կամ բաշխման համար, այդ թվում՝ իրենց մեջ 90-րդ խմբի սարքերը կամ սարքվածքները և թվային ղեկավարման ապարատներն ընդգրկող, բացի 8517 ապրանքային դիրքի կոմուտացիոն սարքվածքներից՝ 1000 Վ-ից ոչ ավելի լարումով
8541 10	Դիոդներ՝ բացի ֆոտոդիոդներից կամ լուսադիոդներից (LED)
8541 21	Տրանզիստորներ՝ բացի լուսատրանզիստորներից՝ 1 Վտ-ից պակաս ցրման հզորությամբ
8541 29	Տրանզիստորներ՝ բացի լուսատրանզիստորներից՝ այլ
8541 30	Թիրիստորներ, դինիստորներ և տրինիստորներ՝ բացի լուսազգայուն սարքերից

8541 49	Կիսահաղորդչային լուսազգայուն սարքեր (բացի լուսագալվանական գեներատորներից և տարրերից)
8541 51	Այլ կիսահաղորդչային սարքեր՝ կիսահաղորդիչների հիմքով կերպափոխիչներ
8541 59	Այլ կիսահաղորդչային սարքեր
8541 60	Հավաքված պյեզոէլեկտրական բյուրեղներ
8542 31	Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝ պրոցեսորներ և կոնտրոլերներ՝ միացված կամ չմիացված հիշող սարքվածքներով, կերպափոխիչներով, տրամաբանական սխեմաներով, ուժեղարարներով, սինխրոնիզատորներով կամ այլ սխեմաներով
8542 32	Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝ հիշող սարքվածքներ
8542 33	Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝ ուժեղարարներ
8542 39	Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝ այլ
8543 20	Ազդանշանների գեներատորներ
8548 00	Սարքավորումների կամ ապարատուրայի էլեկտրական մասեր՝ 85-րդ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8807 30	Ինքնաթիռների, ուղղաթիռների կամ անօդաչու թռչող ապարատների այլ մասեր
9013 10	Հեռադիտակային նշանոցներ՝ զենքերի վրա տեղադրելու համար. շրջադիտակներ (պերիսկոպներ). դիտափողեր, որոնք պատրաստված են որպես տվյալ խմբում կամ XVI բաժնում նշված մեքենաների, գործիքների, սարքերի կամ ապարատուրայի համար մասեր
9013 80	Օպտիկական այլ սարքվածքներ, սարքեր և գործիքներ
9014 20	Աերոնավիգացիայի կամ տիեզերական նավիգացիայի համար սարքեր և գործիքներ (բացի կողմնացույցներից)
9014 80	Նավիգացիոն այլ սարքեր և գործիքներ
9027 50	Սարքեր և ապարատուրա՝ օպտիկական (ուլտրամանուշակագույն, սպեկտրի տեսանելի մասի, ինֆրակարմիր) ճառագայթման վրա հիմնված, այլ.
9030 20	Օսցիլոսկոպներ և օսցիլոգրաֆներ
9030 32	Գրանցող սարքվածքով ունիվերսալ չափիչ սարքեր
9030 39	Լարման, հոսանքի ուժի, դիմադրության կամ հզորության չափման կամ հսկման համար այլ սարքեր և ապարատուրա՝ գրանցող սարքվածքով
9030 82	Կիսահաղորդչային թիթեղների կամ սարքերի չափման կամ ստուգման համար այլ սարքեր և ապարատուրա

2710 19 820	
3919 90 000	
4011 30 000	
4016 99 970	
4911 99 000	
7007 21 800	
7019 63 000	Նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերով դասակարգվող ապրանքներ՝
7311 00 110	նախատեսված օդանավերի և ավիացիայի համար
7616 99 900	
8205 59 809	
8412 21 800	
8412 39 000	
8413 30 800	
8419 50 000	
8419 81 200	
8421 99 000	
8424 10 000	
8424 90 000	
8481 10 990	
8481 20 100	
8481 20 900	
8481 80 739	
8481 80 790	
8481 80 990	
8483 40 510	
8484 20 000	
8484 90 000	
8504 10 800	
8528 42 900	
8531 20 200	
8537 10 910	
8537 10 980	
8539 31 900	
8802 30 000	
8807 10 000	
8807 20 000	
8807 30 000	
8807 90 000	
9020 00 000	
9025 90 000	
9029 10 000	
9031 80 380	
9032 10 890	
9032 89 000	

(հավելվածը լրաց., փոփ. 28.09.23 N 1660-Ն, լրաց. 14.03.24 N 364-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

26.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 26 մայիսի 2023 թվական: